ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

6 օգոստոսի 2026 թվականի N 1157-Ն

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՎԱՐԴԱՇԵՆ 6-ՐԴ ՓՈՂՈՑԻ Հ. 66/1 ԵՎ ՎԱՐԴԱՇԵՆ 6-ՐԴ ՓՈՂՈՑԻ Հ. 68Ա ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՇԵՆՔԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԿԱ ՇԱՀ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի «ա», «է» և «ը» կետերով, 5-րդ, 7-րդ և 11-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Սույն որոշման N 2 հավելվածում նշված տարածքների նկատմամբ ճանաչել հանրության գերակա շահ՝ հետևյալ հիմնավորումներով.

1) Երևան քաղաքի Վարդաշեն 6-րդ փողոցի հ. 66/1 և Վարդաշեն 6-րդ փողոցի հ. 68ա հասցեներում գտնվող քանդման ենթակա 4-րդ կարգի վթարային հանրակացարանային շենքերի քանդման, այդ շենքերի բնակիչների վերաբնակեցման աշխատանքների (այսուհետ՝ ծրագիր) իրականացման շահը գերակայում է օտարվող սեփականության սեփականատերերի շահերի նկատմամբ, քանի որ՝

ա. Երևան քաղաքի Վարդաշեն 6-րդ փողոցի հ. 66/1 և Վարդաշեն 6-րդ փողոցի հ. 68ա հասցեներում գտնվող քանդման ենթակա 4-րդ կարգի վթարային հանրակացարանային շենքերի բնակիչների վերաբնակեցման արդյունքում կապահովվի տվյալ

շենքերի բնակիչների և երրորդ անձանց անվտանգությունը, 4-րդ կարգի վթարային շենքերը կապամոնտաժվեն, կվերանա այդ շենքերի փլուզման վտանգը, կբացառվեն անկանխատեսելի հետևանքները և արդյունքում կլուծվեն քաղաքի տվյալ շենքերում բնակվող բնակիչների բնակարանային խնդիրները,

բ. տվյալ տարածքում կիրականացվեն կանաչապատման և բարեկարգման աշխատանքներ, կստեղծվեն կանաչ և հանգստի գոտիներ,

գ. կբարելավվի սանիտարական վիճակը և կվերականգնվի էկոլոգիական հավասարակշռությունը,

դ. կպաշտպանվեն անձանց կյանքը, առողջությունը կամ սեփականությունը,

ե. կնվազեցվեն և կկանխվեն հնարավոր արտակարգ իրավիճակները.

2) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի արդյունավետ իրագործումը չի կարող ապահովվել առանց սույն որոշման N 2 հավելվածում ընդգրկված գույքի օտարման, քանի որ դրանք գտնվում են սույն որոշմամբ նախատեսված ծրագրի իրականացման գոտում և անհնար է ապահովել ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացումը՝ առանց դրանց օտարման.

3) օտարվող գույքի նկատմամբ ճանաչված հանրության գերակա շահը չհիմնավորված վնաս չի պատճառում սույն որոշման N 3 հավելվածում նշված շենքերի սեփականատերերին և այլ գույքային իրավունքներ ունեցող անձանց.

4) գույքի օտարումն ուղղակիորեն նպաստելու է օտարման նպատակի իրագործմանը և օտարման ենթակա սեփականությունն օգտագործվելու է բացառապես հանրության գերակա շահ ճանաչված օտարման նպատակով:

2. Հաստատել սույն որոշման N 2 հավելվածում ընդգրկված սեփականության օբյեկտների օտարման սխեման՝ համաձայն N 3 հավելվածի:

3. Սահմանել, որ՝

1) հանրության գերակա շահերի ապահովման նպատակով օտարվող սեփականության դիմաց փոխհատուցումը տրամադրվելու է «Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» օրենքով սահմանված կարգով.

2) սույն որոշման 1-ին կետում նշված քանդման ենթակա 4-րդ կարգի վթարային շենքերի բնակիչների վերաբնակեցման ծրագիրն իրականացնելու և տվյալ շենքերում բնակվող բնակիչների բնակարանային խնդիրները լուծելու նպատակով կողմերի ցանկության դեպքում օրենսդրությամբ սահմանված կարգով կնքվող պայմանագրով օտարվող սեփականության դիմաց փոխհատուցումը, ինչպես նաև սույն որոշման N 1 հավելվածում նշված շահառուների ֆինանսական աջակցության տրամադրումը կիրականացվի բնակարանների գնման վկայագրեր տրամադրելու միջոցով՝ համաձայն N 1 հավելվածի.

3) սույն որոշման 1-ին կետում նշված տարածքների ձեռք բերող է հանդիսանում Հայաստանի Հանրապետությունը.

4) նախատեսված օտարման գործառույթների իրականացումը համակարգող և սեփականության օտարման գործառույթների իրականացման համար պատասխանատու պետական լիազոր մարմնի գործառույթը պատվիրակվում է Երևանի քաղաքապետին.

5) սեփականության օտարման գործընթացն սկսելու վերջնաժամկետ է սահմանվում 1 (մեկ) տարի՝ սկսած սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից.

6) օտարման նպատակի իրագործումը սկսելու վերջնաժամկետը 2028 թվականի հուլիսի 1-ն է, իսկ ավարտելու վերջնաժամկետը՝ 2028 թվականի դեկտեմբերի 31-ը.

7) սույն որոշմամբ հանրության գերակա շահ ճանաչված տարածքների և այդ տարածքներում առկա սեփականության օբյեկտների նկարագրության արձանագրության կազմման գործառույթներն իրականացնում է Երևանի քաղաքապետը.

8) սույն որոշմամբ հանրության գերակա շահ ճանաչված տարածքների և դրանցում առկա սեփականության օբյեկտների նկարագրության արձանագրության կազմման աշխատանքներն իրականացվում են Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով և ժամկետներում:

4. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուն հաջորդող յոթ օրվա ընթացքում որոշումը պատշաճ ձևով ուղարկել օտարվող սեփականության սեփականատիրոջը (առկայության դեպքում՝ նաև արժեթղթերի

անվանատիրոջը) և օտարվող գույքային իրավունքներ ունեցող անձանց, իսկ եթե սեփականության սեփականատերը սնանկության վարույթով հանդիսանում է պարտապան, ապա նաև սնանկության գործով կառավարչին՝ «Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» օրենքի 17-րդ հոդվածով սահմանված կարգով:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2026 թվականի սեպտեմբերի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

06.08.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ